



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

## Խմբագրական

### Փետրվարից փետրվար

Համաշխարհային օրակարգ մուտք գործելը մեր երկրի նման փոքր երկրների եւ քիչ քանակությամբ ազգության համար բավականին դժվար է: Դեռ ավելին, համաշխարհային օրակարգում պատմական բարի համբավի վաստակելը եւ շրջադարձի առիթ դառնալը համարյա անհնարին է: Սակայն հայ ժողովրդին անցյալ դարում երկու անգամ այդպիսի առիթներ են տրվել 67 տարիների տարածությամբ՝ հենց փետրվար ամիսներին: Մեկը՝ 1921 թվականի փետրվարի 18-ին, իսկ երկրորդը՝ 1988-ի փետրվարի 20-ին: Երկու իրողություններն էլ ըմբոստություններ եւ, ավելի հստակ, հեղափոխություններ էին, եւ երկուսն էլ՝ խորհրդային կարգերի դեմ:

1921-ի փետրվարի 18-ին նոր խորհրդայնացած Հայաստանի ժողովուրդն այլևս չէին գտնվում բռնությանը եւ իր ծոցից ելած հերոսների խոշտանգումներին ու հալածանքներին: Ապստամբեց, ըմբոստացավ, հեղափոխեց կարգերը: Հայաստանի փրկության կոմիտեն ստանձնեց երկրի կառավարումը եւ կարճ ժամանակահատվածում՝ ընդամենը երկուս ու կես ամիսների ընթացքում փրկեց շատ կարեւոր մի բան՝ պատմության մեջ գրանցվեց առաջին ընդվզումը խորհրդային կարգերի դեմ: Եվ այդպես, ելանք միջազգային բեմահարթակ՝ ազատատենչի բարի համբավի դափնիով:

1988-ի փետրվարի 20-ին գումարվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզխորհրդի նիստ, ուր որոշվեց վերամիավորվել Մայր Հայաստանին, եւ այդպիսով հիմքը դրվեց Արցախյան կորուստի շարժման: Այս հաստատումը մեզ համար կարեւոր է եւ մեր տեսակետից պատմական: Սակայն համաշխարհային օրակարգում հանդես եկանք այլ պատգամով: Խորհրդային Միության փլուզումը հետազոտող որեւէ քաղաքագետ կամ պատմաբան չի կարող անտեսել այն առաջին կայծը, որը պատճառ դարձավ անարդարություններով լի տակառի պայթելուն: Դա հենց արցախյան կայծն էր «Լեռնին, պարտիա, Գորբաչով...» սկզբով եւ հայտնիների արյամբ պսակված հաղթանակով: Եվ այսպես, մեկ անգամ եւս ելանք միջազգային բեմահարթակ՝ այս անգամ եւս ազատատենչի բարի համբավի դափնիով:

67 տարիների տարածությամբ՝ այս երկու փետրվարներին տեղի ունեցած իրադարձությունների պատգամը մեզ համար միշտ պետք է մնա առօրեական: Պատգամը մեկն է՝ ոչ ստրկությունը: Իսկ այդ ստրկությունը նախ եւ առաջ բուն է դնում մարդկանց մտքերում: Ստրկության որդը նախ ուսում է մարդուն ներսից: Մարդը պատրաստ է լինում դառնալ ստրուկ, երբ մանկուց, պատանեկությունից եւ երիտասարդ տարիքում իրեն փորձում են կայունության եւ հնազանդության կոչերով խաբել, սանձել ըմբոստ հոգին ու հնազանդեցնել: Հնազանդվող, ըմբոստության ոգին մարած հասարակությունը դատապարտված է լճացման: Չի կարող զարգացում ապրել մի հավաքականություն, ուր ի խնդիր կայունության խորթ աչքով են դիտում հարցական նշաններ օգտագործողներին, նրանց, ովքեր ըմբոստանալով առկայի դեմ, հարցականի տակ են դնում գործող կարգերը եւ փոփոխության նախաձեռնություններ են ստանձնում: Ի դեպ, ՀՀ վարչապետը փետրվարի 15-ին Երեւանի պետական համալսարանի այցի ժամանակ ուսանողներին կոչ է արել լինել «ըմբոստ ու չհարմարվող»:

Չարագաման համար այլ ուղի չկա: Հետեւենք փետրվարյան խորհուրդներին եւ ընդառաջենք ըմբոստության եւ չհամակերպվելու կոչին:



## Կայացավ սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն

2017թ. փետրվարի 20-ը ԼՂՀ նախագահի 2017թ. հունվարի 19-ի հրամանագրով սահմանվել էր՝ որպես Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի հանրաքվեի օր: Սա 26 տարվա անկախություն ձեռք բերած մեր երկրի թվով 3-րդ համապետական նշանակության հանրաքվեն է, եւ այն անց է կացվում ԼՂՀ օրենքի ու 2015թ. հունվարի 1-ին գործողության մեջ դրված ԼՂՀ նոր Ընտրական օրենսգրքի հիման վրա:

Փետրվարի 20-ի հանրաքվեն անցկացվել է հանրապետության ողջ տարածքում, որն ընդգրկում է 11 ընտրատարածք՝ յուրաքանչյուրում 8000-9000 ընտրողներով: Ինչ վերաբերում է Թալիշ գյուղի բնակիչներին, ապա նրանց մեծ մասը ներկայումս գտնվում է Մարտակերտի շրջանի Ալաշան տեղամասում, որտեղ էլ կազմակերպվել է նրանց քվեարկության գործընթացը: Բացի այդ, Երեւան քաղաքում՝ ԼՂՀ մշտական ներկայացուցչությունում եւս ապահովվել է Հայաստանի տարածքում գտնվող թալիշիների մասնակցությունը հանրաքվեին:

Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թիվն ըստ ցուցակների 103 818 էր, քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը՝ 79 428, կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը՝ 69 570, դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը՝ 7686, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 2172:

Արցախի Սահմանադրության նախագծի փետրվարի 20-ին կայացած հանրաքվեին դիտորդական առաքելությամբ մասնակցել են 100 միջազգային եւ 103 տեղական դիտորդներ՝ շուրջ երեք տասնյակ երկրներից, ինչպես նաեւ՝ զանգվածային լրատվամիջոցների 80 եւ ավելի ներկայացուցիչներ: Փետրվարի 20-ին եւ 21-ին՝ հանրաքվեի տեղամասերում քվեարկությունն ավարտվելուց հետո, դիտորդական առաքելություններն իրականացրած պատվիրակություններն ու առանձին անհատներ ԼՂՀ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի մամուլի կենտրոնի դահլիճում կազմակերպել են ասուլիսներ, որոնց ընթացքում իրենց կողմից տրվել են գնահատականներ՝ հանրաքվեի ընթացքի եւ դրա՝ որպես կարեւոր քաղաքական իրադարձության վերաբերյալ: Եղել են նաեւ առանձին հայտարարություններով հանդես եկողներ: Այս ձեւաչափով փետրվարի 20-ին ԼՂՀ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի մամուլի կենտրոնում առաջինը հանդես է եկել Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության ներկայացուցիչը: Հաջորդ օրը՝ փետրվարի 21-ին, վաղ առավոտից մամուլի ասուլիսներ են կազմակերպել Եվրախորհրդարանի պատգամավորների, Բոլիվիայի, Հայ Դատի հանձնախմբի արիեստավարժ միջազգային, ՀՀ Ազգային ժողովի, Հայաստանի Եվրոպա-

թիկների թիվը՝ 2172: Գերմանիայի, Ավստրիայի, Ուրուգվայի, Մեքսիկայի, Բրազիլիայի, Արգենտինայի, Բասկերի երկրի (Իսպանիա), ԱՄՆ-ի, Կանադայի պատվիրակությունները: Դիտորդները կարելուրել են հանրաքվեն՝ որպես պետականության ամրապնդման եւս մեկ փաստ, որպես Արցախի ժողովրդի ազատ կամարտահայտության եւ ժողովրդավարության գործընթաց:

«Այստեղ՝ Արցախում, եւ տեսնում եմ բարգավաճում եւ առաջընթաց: Ժողովրդավարությունն ու ազատությունը պետք է պաշտպանված լինեն առաջին հերթին: Եվ ուրախ եմ, որ երկրի իշխանությունները ջանք չեն խնայում ժողովրդի կենսամակարդակը բարձրացնելու եւ երկիրը զարգացնելու համար», - մամուլ ասուլիսին նշել է Եվրախորհրդարանի պատգամավոր Էլենի Թեոխարիուսը: «Ընտրական հարցերով պատասխանատուները կարողացան կազմակերպել օրինական հանրաքվե՝ պրոֆեսիոնալ եւ թափանցիկ կերպով: Արցախը հարգել է պահպանել եւ բոլոր նախադրյալները, որոնք պահանջվում են միջազգային կազմակերպությունների կողմից», - մասնավորապես եզրակացրել են դիտորդները:

Չնայած այս գնահատականին՝ միջազգային դիտորդներն ականատես եղան փոքր բացթողումների, որոնք, սակայն, ըստ իրենց, չեն ազդել հանրաքվեի արդյունքների վրա:

## Դիտորդների հայտարարությունները ապտակ է Ադրբեջանին



Փետրվարի 20-ին Արցախում կայացած Սահմանադրության հանրաքվեին ՀՀ Դատի Եվրոպայի հանձնախմբի նախաձեռնությամբ 18 հոգուց բաղկացած դիտորդական առաքելություն է ժամանել Արցախ:

Կարդացեք 2-րդ էջում

## Հիշողությունների էջերից



Ամեն գարնան հետ թարմանում է իմ գարնանային հիշողությունը 1988 թ. մարտի 10-ի ճամփորդությունից՝ Գորիսի ինստիտուտում սովորող արցախցի երեք ուսանողների հետ:

Կարդացեք 8-րդ էջում

### Դիտորդների հայտարարությունները ապտակ է Ադրբեջանին



Փետրվարի 20-ին Արցախում կայացած Սահմանադրության հանրաքվեին ԴՅԴ Հայ Դատի Եվրոպայի հանձնախմբի նախաձեռնությամբ 18 հոգուց բաղկացած դիտորդական առաքելություն է ժամանել Արցախ: Դիտորդական խմբի առաքելության, հանրաքվեի քվեարկության ընթացքի եւ այլ հարցերի շուրջ «Ապառաժ»-ը գրուցել է ԴՅԴ Հայ Դատի Եվրոպայի հանձնախմբի նախագահ Գասպար Կարապետյանի հետ:

**Դիտորդական խմբի անդամները եղան Արցախի բոլոր շրջանների տարբեր ընտրատեղամասերում: Ինչպիսի՞ն էր քվեարկության ընթացքը՝ ըստ դիտորդների տպավորության:**

Ինչպես Արցախի Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ, այս անգամ էլ մեր դիտորդների եզրակացությունը նույնն էր: Միջազգային բոլոր չափանիշներին համապատասխան ընտրություններ են կայացել, հարգվել է ընտրական օրենքը, ընտրատարածքների ներսում խնդիրներ չեն արձանագրվել, հանձնաժողովների նախագահներն իրենց գործը կատարել են: Արցախ ժամանած բեզբիսի երկու խորհրդարանականները եւս օրինակելի գնահատեցին ընտրությունները:

Չճանաչված պետության համար նման ընտրություններ կատարելը մեծ ձեռքբերում է: Ըստ դիտորդների՝ այս իմաստով առաջընթաց է տեղի ունեցածը: Զվեարկության ճիշտ կազմակերպմամբ Արցախի մրցակիցների համեմատությամբ հավելյալ առավելություն տրվեց: Ամեն ինչը կարող է դերակատարություն ունենալ:

Երբեք չեն կարող իմանալ՝ վաղն ինչ կարող է պատահել եւ ինչ հողվույթներ կլինեն, բայց այսօրվա դրությամբ վաղը լուրջ փոփոխություններ չեն սպասվում: Նման դեպքերում ամեն փոքր քար նպաստում է, օժանդակում է, որպեսզի տունը կառուցվի: Եվ այս փոքր քարերն իրենց դերակատարությունը կարող են ունենալ:

Պատվիրակության անդամների վկայությամբ՝ այս երկիրը հարգում է բոլոր ժողովրդավարական նորմերը: Հակառակ չճանաչվածությանը՝ կայացած պետություն է, որն ունի գործող բոլոր համապատասխան ժողովրդավարական կառույցները՝ ի հակադրություն Արցախի գոյություն չունեցող պահանջող երկրի. այնտեղ նման կարգեր չկան: Սա հաստատված է համապատասխան հարցերով զբաղվող բոլոր կառույցներին ուղղված զեկույցով:

Համոզված եմ, որ այսքան դիտորդների ներկայությունն այստեղ եւ նրանց տված հայտարարություններն ապտակ

են Ադրբեջանին, որը ծիծաղելի հայտարարություն տարածեց, թե նրանք զբոսաշրջիկներ են, տեղի ունեցող գործընթացներից անտեղյակ մարդիկ: Եթե անտեղյակ զբոսաշրջիկներ են, ինչո՞ւ է Ադրբեջանն այդքան մտահոգվում, աշխարհը տակնուվրա անում:

**Ըստ Ձեզ, կարո՞ղ է կայացած հանրաքվեն նպաստել Արցախի միջազգային ճանաչման գործին:**

Չեմ կարծում, թե Սահմանադրությունը կարող է եական բան փոխել արդեն տեղի ունեցող գործընթացում: Այդ ուղղությամբ էլ պետք է համակարգված կերպով աշխատանքները շարունակվեն թե մեր կողմից, թե պետության կողմից, որպեսզի կարողանանք արտաքին աշխարհին ճիշտ պատկերը ներկայացնել: Ադրբեջանը խեղաթյուրված է ներկայացնում պատկերը: Մենք պետք է ճիշտ աշխատենք, ճիշտ ներկայացնենք իրականությունը եւ կարողանանք հնարավորինս շատ մարդ բերել Արցախ: Իրենց աչքերով տեսնելով այս երկրի մշակույթը, գոյությունը՝ Արցախ այցելածները սիրահարված են վերադառնում: Օրինակ, որոշ ժամանակ առաջ Բելգիայից մարդ չի այցելել այստեղ: Մի տարվա մեջ Բելգիայից ժամանած խորհրդարանականների թիվը հասավ 18-ի, եւ այդ թիվը կմեծանա: Անշուշտ, մեր աշխատանքների, հրավերների, բացատրա-

կվականա:

**ԵԱՀԿ Միսկի խմբի համանախագահները հայտարարություն են տարածել, որում ասվում է, որ այս հանրաքվեն որեւէ ազդեցություն չի կարող ունենալ Ղարաբաղի իրավական ճանաչման գործում: Ի՞նչ կարծիքի եք դուք:**

Ինձ համար սպասելի էր նման հայտարարությունը: Այդ կարգի հայտարարությունները քարոզչական նպատակով արված հայտարարություններ են. տեքստը գրված է, եւ ամեն անգամ նման դեպքերում դարակից հանում ու հայտարարում են, որ չեն ճանաչում ընտրությունները: Անիմաստ բան է, որովհետեւ՝ ի՞նչ է նշանակում, որ չեն ճանաչում հանրաքվեն, երբ խոսքը չճանաչված երկրի մասին է: Կամ ո՞վ է հարցում՝ ճանաչում են, թե ոչ:

Հանրաքվեն կայացավ նախ եւ առաջ ժողովրդի համար: Սահմանադրությունը ներքին փաստաթուղթ է, որի հիման վրա այս ժողովուրդը պիտի ապրի եւ երկիրը պիտի կառավարվի: Սահմանադրությունը երրորդ կողմին գոհացնելու նպատակ չի հետապնդում: Եթե հակաժողովրդավարական օրենքներ կան երկրի մեջ, ինչպես օրինակ Ադրբեջանը, այնտեղ պահանջներ կարող են լինել, բայց Արցախի դեպքում նման պահանջ չկա: Եթե որեւէ մեկը չի ճանաչում երկիրը, ի՞նչ հիմքով պիտի այս կամ այն հող-



կան աշխատանքների դերն էլ կա: Սակայն, հիմնական քարոզողները Արցախ եկածներն են: Մեկը մյուսին հորդորում է իր աչքով տեսնել:

**Ի՞նչ կարող է անել Արցախը միջազգայնորեն ճանաչված դառնալու համար:**

Ներքին իմաստով՝ Արցախը պիտի էլ ավելի աշխատի, որպեսզի ամրապնդի ժողովրդավարությունը, հավասարությունը, քաղաքացիների կյանքի մակարդակը բարձրանա: Օտարերկրացիները տեսնում են գեղեցիկ վայրեր, հուշակոթողներ, վանքեր, բարետես Ստեփանակերտն ու Շուշին, բայց տեսնում են նաեւ գյուղերը, շրջանները: Այնտեղ եւս պետք է այդ աշխատանքը տարվի, որովհետեւ՝ եթե դու ներքնապես գորդ ես, նաեւ արտաքին առումով ես հզոր:

Ընդհանուր առմամբ՝ դրական են այստեղից ստացված տպավորությունները, բայց միշտ ավելի բարելավվելու հնարավորություններ կան: Շատ անգամ եմ կոչ արել, որ այդ ուղղությամբ պետք է աշխատել, երբեք չգոհանալ եղածով, միշտ հաշվի առնել, որ լավի թշնամին ավելի լավ է: Եթե սա հաշվի առնեն իշխանությունները, երկրի վիճակն ավելի

վածները փոխելու պահանջ դնի: Թե Միսկի խմբի, թե մի շարք այլ երկրների հայտարարությունները, իմ կարծիքով, անիմաստ են, որովհետեւ եղածի էությունը չի փոխվում: Արցախի ժողովուրդը որոշեց ունենալ այս Սահմանադրությունը. ընդունեն-չընդունեն՝ փաստն այս է:

Հիմնական հարցն այն է, որ միջազգային կազմակերպությունները Ադրբեջանին համոզեն, որ նրա այսօրվա կեցվածքը չի կարող նպաստել խնդրի լուծմանը: Չկարգավորված խնդիրը հատկապես վատ է Ադրբեջանի ժողովրդի համար: Այլեւը հարցն օգտագործում է իր ժողովրդին կեղեքելու համար: Բայց այս ձեռով լուծումի չեն հասնում: Ուստի կարծում եմ, որ չպետք է մտահոգվել նման հայտարարությունից, պետք է մտահոգվել, եթե Միսկի խումբը չաշխատի, չփորձի գտնել արդար լուծումներ: Այսօրինակ հայտարարություններն ինձ չեն մտահոգում:

**Բլոգեր Ալեքսանդր Լապչինի ձեռքավորությունը, ապա արտահանձնումը Բելոռուսից Ադրբեջան՝ կարծես միջազգային համարժեք արձագանքի չարձա-**

**նացավ: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Եվրոպայի չդատապարտեց դեպքը:**

Առաջին անգամը չէ, որ Ադրբեջանը փորձում է ազդել այլ պետությունների, անձերի վրա, որպեսզի Արցախը մեկուսացված պահվի: Անշուշտ, Ռ. Սաֆարովի դեպքում, որը շատ ծանր դեպք էր, Եվրոպայի կողմից բավական լուրջ հակազդեցություններ եղան: Եվրոպական խորհրդարանը բուռն կերպով քննադատեց Սաֆարովի դեպքը, ապա հանձնումը Ադրբեջանին: Բավական շրջանակներ քննադատություններ հնչեցրին: Լապչինի պարագայում ավելի մեղմ էին, թեեւ եղան հայտարարություններ, ինչպես Եվրոպայի մարդու իրավունքների պաշտպանի կողմից: Սակայն պետք է նկատի ունենալ, որ Լապչինի հարցը դատական առումով այնքան էլ մաքուր չէր, ինչպես ուկրաինական անձնագրի գործածումը, ուրիշ անունով ներկայանալը: Ադրբեջանը հասկանալի պատճառներով այդ քարոզչությունը կատարեց, որպեսզի վախեցնի հավանական այլ այցելուների՝ ներշնչելով, որ նրանք եւս կարող են Արցախ այցելելու դեպքում նման փորձանքի ենթարկվել:

Եվրոպայի չհակազդեց, որովհետեւ Եվրոպայում եւս մարդու իրավունքների խախտումներ կան, նաեւ՝ Եվրոպայի հիմնական գործելաոճը պրագմատիզմն է, եւ մտածում են այսօրվա մասին: Այնտեղ այնքան էլ նախանձախնդիր չեն մարդու իրավունքների պաշտպանությամբ: Թեեւ հայտարարում են, բայց շատ դեպքերում, տարբեր շահերի գոյության պարագայում, մարդու իրավունքները կարող են երկրորդական տեղ զբաղեցնել: Տվյալ պարագայում՝ նրանք գիտեն, թե ինչպիսի երկիր է Ադրբեջանը, նաեւ՝ որ բոլոր հարձակումները, ինչպես Ապրիլյան պատերազմը, տարբեր միջադեպերը Ադրբեջանի կողմից են սանձազերծվում: Բայց առկա է հավասարակշռություն պահելու փիլիսոփայությունը, եւ դրա համար էլ միշտ երկու կողմերին կոչ են անում սառնարյուն լինել, ծայրահեղությունների չգնալ եւ այլն: Եվ սա ավելի վատ է, որովհետեւ սրանով փաստորեն քաջալերում են Ադրբեջանին՝ շարունակելու իր կեցվածքը:

Այժմ բանակցություններ են տարվում Ադրբեջանի հետ Եվրոպական Միության 1996թ. կնքած գործընկերության ու համագործակցության համաձայնագրին փոխարինող սոր փաստաթղթի ստորագրման համար: Այդ պայմաններում, կարծում եմ, նման դեպքի համար Եվրոպայում չեն ցանկանում քննադատական կեցվածք ունենալ եւ ավելի դժվարացնել հարաբերությունները: Ադրբեջանի նախագահը Բյուրսելում եղած ժամանակ չայցելեց Եվրոպական խորհրդարան: Եւ-ի 3-4 քաղաքական կուսակցություններ Ադրբեջանում մարդու իրավունքների հարցի շուրջ կլոր սեղան էին կազմակերպել, որին հրավիրված էր նաեւ Բյուրսելում գտնվող Ալիեւը: Սակայն վերջինս հրաժարվեց մասնակցելուց: Հասկանալի է, որ վերջնական որոշում կայացնելու իրավունք ունեցող խորհրդարանը կարող է հարցեր առաջացնել: Այս պատճառով է, որ պետությունների կամ հանձնաժողովների կողմից հավելյալ հայտարարություններ կամ քայլեր չեղան: Մեր հանձնախմբի, այլ կառույցների կողմից կազմակերպված ցույցերի պարագայում էլ լուրջ սպասելիք չունեն:

Հարցազրույցը՝  
Տաթևիկ ԱՂԱՉԱՆՅԱՆ

# Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի շնորհավորական ուղերձը Հայրենիքի պաշտպանի օրվա առթիվ



Սիրելի՛ հայրենակիցներ  
 Արցախի Հանրապետության իշխանությունների և անձամբ իմ անունից ի սրտե շնորհավորում եմ ձեզ Հայրենիքի պաշտպանի օրվա առթիվ:  
 Շնորհավորում եմ մեր քաջ զինվորներին, սպաներին, գեներալներին, ովքեր իրենց ամենօրյա անձուկեր ծառայությամբ պաշտպանում են մեր երկրի ու ժողովրդի անվտանգությունը, բոլոր նրանց, ովքեր օրհասական պահին կանգնում են սահմանը պահող զինվորի կողքին և իրենց անգնահատելի մասնակցությունը բերում հայրենիքի պաշտպանության գործին:  
 Այսօր տոն է մեր ողջ ժողովրդի համար, քանի որ, ինչպես բազմիցս ենք նշել, մեր երկիրը մենք պաշտպանում ենք բոլորս միասին՝ շինարարն ու բժիշկը, մանկավարժն ու բարերարը, հեռավոր գյուղի բնակիչն ու սփյուռքահայ դպրոցականը: Ապրիլյան քառօրյա պատերազմը կրկին ապացուցեց այդ անհերքելի ճշմարտությունը: Հայրենիքը երախտապարտ է իր նվիրյալներին: Թանկագին բարեկամներ,  
 Մեկ անգամ ես շնորհավորում եմ բոլորիդ և մաղթում խաղաղություն, քաջամոռջություն, հաջողություններ ու ամենայն բարիք, մեր զինվորներին՝ ամուր ոգի և անփորձանք ծառայություն:

## «Կռունկ»-ի բանվորական խմբի անդամ էի

Յաշա Ղազարյանը 1988-ի Ղարաբաղյան շարժման ակտիվիստներից է: Հեռավոր 88-ին նա Ստեփանակերտի պետական դրամատիկական թատրոնում ադմինիստրատոր էր աշխատում. եռանդով լի մի պարզ դարաբաղցի, ում համար իր երկրի ազգային գարթոնը դարձավ նպատակ, կենսակերպ:

**- Յաշա քեռի, ի՞նչ զգացումներ է Ձեզ մոտ առաջացում 88-ի փետրվարյան շարժումը:**

- Փետրվարի 20-ը պատմական օր էր մեզ համար: Այդ օրը տեղի ունեցավ մարզգործկոմի պատմական նստաշրջանը, որը հռչակեց ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից անջատելու և Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու որոշման մասին: Պատմական այդ որոշումն ընդունվեց ադրբեջանական օմոնականների շրջափակման, ահ ու սարսափի մթնոլորտի պայմաններում, սակայն դարաբաղցիներն իրենց մեջ ուժ գտան՝ չտրվելու սադրանքներին: Ադրբեջանի կենտրոնից եկել էր այն ժամանակվա կենտրոնի քարտուղար Բազիրովը, որն ամեն կերպ փորձում էր ճնշում գործադրել, որ մարզգործկոմի նստաշրջանը չկայանա, սակայն, շնորհիվ մեր պատգամավորների քաղաքական հասունության, բոլորը միաձայն քվեարկեցին, և այդ փաստաթուղթը դարձավ պատմական փաստաթուղթ: Դա դարաբաղցիների մեծ նվաճումն էր:

Այդ ժամանակ Ղարաբաղում ընդհատակյա կազմակերպություն էր գործում՝ «Կռունկը», կար նաեւ, այսպես կոչված, «Բանվորական» խումբը, որի մեջ ես էլ էի ընդգրկված. մենք էլ մեր անելիքներն ունեինք: «Կռունկ»-ի հանձնարարությամբ թուրքիկներ էինք տարածում, քաղաքի շուրջ կատարվող երթերն էինք հսկում, որ խանգարողներ չլինեն, ադրբեջանաբնակ թաղամասերում կազմակերպում էինք նրանց ընտանիքների խաղաղ, անվտանգ դուրսբերումը: Երբ խաղաղ երթերը սկսվում էին, ասենք՝ 1000-ով, շրջելով քաղաքի փողոցներով՝ դառնում էին 3-5 հազարանոց ցույցեր. այդ ամենը վերահսկել էր պետք: Դա այն ժամանակահատվածն էր, երբ դեռ բոլոր ղեկավարները չէ, որ համոզված էին մեր պայքարի արդարացիության մեջ: Կային նաեւ աթոռից կառած ղեկավարներ: Մարզկոմի շենքում տիրություն էին անում Ադրբեջանին ծախված ենիզերիները՝ Սաֆինով, Պոլյանիչկո դրածոները, որոնք պատրաստ էին արյան մեջ խեղդելու շարժումն ու ձեռքակալելու մեր ակտիվիստներին: Մարզկոմի կողքին էր տեղակայված այն ժամանակվա «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագրության շենքը: Մենք գիշերները հերթապահում էինք այնտեղ, հսկում էինք, թե տեսնեինք մեր այն ժամանակվա ղեկավարներից ովքեր կապ ունեն ստեղծված ժամանակավոր կառավարության հետ և ցե-


րեկներն իրագրել էինք պահում «Կռունկ» կոմիտեի անդամներին: Ամեն ինչում զգուշություն էր պահպանվում:

**- Ձեզ անտեսված եք զգում՝ որպես շարժման ակտիվիստ:**

- Չէի ասի, որ այդքան անտեսված եմ: Որպես շարժման ակտիվիստ՝ 2008 թվականին ԼՂՀ կառավարության կողմից պարգևատրվել եմ «Երախտագիտություն» մեդալով: Սակայն վերջերս առողջության հետ կապված լուրջ խնդիրներ են ունեցել: 2 ոտքս վիրահատել եմ ՀՀ-ում՝ ծախսելով 5 մլն դրամ: Հարազատ բարեկամներս օգնեցին՝ ով ինչքան կարող էր: Որպես գոհվածի ծնող եւ 2-րդ կարգի հաշմանդամ՝ դիմեցի առողջապահության նախարարությանը, սոցապ նախարարությանը, պաշտպանության նախարարությանը, որ մի բանով օգնեն: Միայն սոցապ նախարարությունը 50 հազար դրամ օգնություն տվեց: Առողջապահության նախարարությունից պատասխանեցին, որ օգնում են միայն սրտային և ուռուցքաբանական խնդիրներ ունեցողներին: Ինչեւէ, չեմ նեղանում:

**- Երբ մենք Շարժումը սկսեցինք, մեր նպատակը մայր Հայաստանին վերամիավորվելն էր: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ մինչեւ այժմ այն իրականություն չի դարձել:**

- Չգիտեմ, այդ հարցը իշխանությունները պետք է լուծեն: Արդեն քանի տարի է՝ իշխանությունները ձգտում են, որ Ղարա-



բաղը որպես բանակցային կողմ մասնակցի, սակայն դեռ հաջողություն չունեցել:

**- Յաշա քեռի, նոր Սահմանադրության հանրաքվեին մասնակցե՞լ եք:**

- Այո, դա իմ քաղաքացիական պարտքն է: Բայց համաձայն չեմ այն կետերին, որով երկիրը պետք է դառնա լրիվ նախագահական: Կիսանախագահականն ավելի ճիշտ է մեր պարագայում:

*Հարցազրույցը՝ Լ. ԲԱՂՅԱՆԻ*

## Փետրվարյան ապստամբությունը

Օրերս նշվում էր ՀՀԴ Լիբանանի Կենտրոնական կոմիտեի պաշտոնաթերթ «Ազդակ» օրաթերթի 90-ամյակը: «Ապառաժ»-ի կողմից շնորհավորելով «Ազդակ»-ին 90 ամյակի միջոցառումների առիթով, հարմար գտանք փետրվարի 18-ի ապստամբությանն անդրադառնալով՝ վերատպագրել «Ազդակ» օրաթերթի խմբագրականը՝ տպագրված 50 տարի առաջ՝ 1967 թ. փետրվարի 18-ին:

46 տարի առաջ, 1921թ. փետրվարի 18-ի արշալույսին հայ ժողովուրդն արձանագրեց պատմության առաջին ապստամբությունը կոմունիստական բռնատիրության դեմ: Այդ թվականից երեսունհինգ տարի անց տարբերությամբ՝ այս երկու ապստամբությունները, որոնցից երկրորդի թատերաբեմն էր Կոչուտի հայրենիքը՝ բազմաչափար Հունգարիան, եկան անառարկելիորեն հաստատելու, որ կոմունիզմը և նրա իշխանության եղանակը միայն ընդվզում են ստեղծում ժողովուրդների հոգիներում:

Մեր պարագայում՝ փետրվարյան ապստամբությունն անվիճելի հերքում էր բուլշեիկյան այն պնդումը, թե հայությունը գրկաբաց ընդունել է այդ վարչակարգը, և Հայաստանի խորհրդայնացումը ժողովրդական լայն զանգվածների բուն ցանկության արդյունքն է: Ծանոթ ենք պատմական այն դրվագներին, որոնք հանգեցրին Հայաստանի խորհրդայնացմանը: Հազիվ երկու տարվա կյանք ունեցող Հայաստանի Հանրապետությունը, որը հանդիսանում էր հայության ճիգերի և ազատագրական արյունալի պայքարի պսակը, օր օրի ենթարկվեց թուրք և խորհրդային սիրալիր գործակցությունից բխած ծանր սպառնալիքին և ճարահատյալ դիմեց խորհրդայնացմանը՝ մեր ժողովրդին նոր շարժերից փրկելու համար:

Կոմունիզմը Հայաստան եկավ հատուկ դաշնագրով և հայ ժողովրդի արժանապատվությունն ու ազգային ինքնությունն գոյությունն անաղարտ պահելու վճռական խոստումով: Բայց, հազիվ մի քանի շաբաթ անց խոստումնադրույթ բուլշեիզմը ուրացավ իր ստորագրությունը և Հայաստանը վերածեց համատարած հալածանքի մի երկրի՝ իրար ետեւից, շարանշարան բանտարկելով կամ քշտելով բոլոր ղեկավարներին: Բանտերը լցվեցին

հայության ընտիր զավակներով, ու ինչ որ պակաս էր թողել մեր դարավոր թշնամին, սկսեց ամբողջացնել բուլշեիզմը՝ նույն ատելավառ մոլուցքով:

Փետրվարի կեսերին դանակը հասել էր ոսկորին: Կացինը, որ Երեւանի բանտում գլխատում էր Համազասպին, միաժամանակ իջնում էր ամբողջ հայության գլխին: Այն ինչպես միշտ, երբ հարվածը հասնում է ազգային գոյությանը, այս անգամ ես հայ ժողովուրդը մեկ մարդու պես ծառայեց և հերոսական խոյանքով տապալեց բուլշեիկյան իշխանությունը՝ վերստին պարզելով ազատության դրոշմը Հայաստան աշխարհի վրա:

Փետրվարյան ապստամբության ղեկավարները պատրանքներ չէին կարող ունենալ իրենց շարժման տեսականության մասին: Գիտեին, որ վաղ թե ուշ, անակնկալի առաջին շրջանն անցնելուց հետո, համայնավարությունը դարձյալ պետք է գրավի կորցրած դիրքերը, բայց գիտեին նաեւ, որ այդպիսով պատմական հաստատում են կատարում, արձանագրում են մի փաստ, որ անպայման իր անդրադարձը կունենա ղեկավարի հետագա զարգացման վրա:

Փետրվարյան ապստամբությունը վերագրվում է ՀՀ Դաշնակցությանը: Ընդունում ենք, որ փետրվարի 18-ի արշալույսին

հայ զանգվածներին ոտքի հանող ոգին Դաշնակցության ոգին էր, հարազատ արտահայտությունն այն ազատախոնդ ոգու, որ պատկանում է հային, տնօրինել է նրա պատմական ընթացքը և խորապես դրոշմված է հայոց պատմության էջերում:

Մինչեւ հիմա Սարգսրապատի ճակատամարտը եւս «դաշնակցական ավանտուրա» էր: Բայց այսօր Հայաստանում ծրագրվում է հուշարձան բարձրացնել Սարգսրապատի հիսունամյակի առիթով: Ժողովուրդների կյանքում պատմական դեպքերը տասնամյակներով ուրացվում են, հիսունամյակով ուրացվում են, գուցե ավելի, բայց ի վերջո ամեն բան իր տեղն է գտնում, և դեպքերը կշռվում և գնահատվում են իրենց իսկական արժեքով:

Փետրվարի 18-ը իր բովանդակությամբ որեւէ տարբերություն չունի Վարդանանց պատերազմից: Հայության նույն ազատախոնդ ոգին է, որ ծառանում է օտար բռնատիրության դեմ, մասնավորապես այն իր հարվածներն և ուղղում մեր երկրան, մեր գոյության իմաստին և հոգեկան արժեքներին:

Պիտի գա այն օրը, երբ համայն հայությունը նույն ակնածանքով պիտի տոնի այդ ապստամբության հերոսների հիշատակը:

Փետրվարի 20՝ Արցախի վերածննդի օր

հնչեցան հեռանում ես բարձրաբերձ լեռան ստորոտից՝ այնքան ավելի հստակ է ուրվագծվում նրա վեհությունը: Այդ մասին դեռ տասնամյակներ առաջ ինձ ասել էր լուսահոգի, անմոռաց բարեկամս՝ գեղանկարիչ Ռուբեն Գաբրիելյանը՝ օրինակ բերելով Հայոց Սուրբ Լեռը՝ Արարատը: Անվանի արվեստագետի այդ դիտարկումը, անշուշտ, վերաբերում է ոչ միայն բնության երեւոյթներին: Այն հատկանշական է նաեւ մարդկային կեցոյթան նշանակալի իրողոյթուններին՝ ժողովրդի, ազգի, հասարակոյթան կյանքում վճռորոշ, բեկումնային դերակատարոյթուն ունեցած պատմական անցքերին: Ժամանակի հեռավորոյթունը երբեք ի գորու չէ մարդկային հիշողոյթան մեջ խունացնելու դրանց դիմագիծը: Ընդհակառակը՝ նույն այդ հարափոփոխ ժամանակի հոլովոյթին համընթաց՝ ավելի ու ավելի է ընդգծվում, արժեւորվում հեռու կամ մոտ անցյալում տեղի ունեցածի պատմական նշանակոյթունը հանրոյթան կյանքում:

Հայ ժողովրդի նորագոյն պատմոյթան այդ նշանակալի պատմական իրողոյթուններին է Ղարաբաղյան շարժումը: Այն, հիրավի, դարձավ արցախահայոյթան եւ, նրա միջոցով, համայն հայոյթան դարավոր ազգային-ազատագրական պայքարի գորավոր խթանը՝ հաստատուն ելակետ հանդիսանալով քսաներորդ դարավերջի հայոց համազգային վերագործնքի համար:

Ղարաբաղյան շարժումը համազգային խնդիրների շուրջ աշխարհասփյուռ հայ ժողովրդի վերամիավորման ու համախմբման հզոր կոչնակ էր, որի ղողանքները սփռվեցին ամենուրեք՝ Մայր հայրենիքում, հայոց սփյուռքի բոլոր գաղթօջախներում:

Ղարաբաղյան շարժումը, ըստ էութան, համախոհ գաղափարակիրների գուտ հայկական համաձուլվածք էր՝ անկախ ամեն մի հայի կեցոյթան վայրից, քաղաքական եւ այլ կողմնորոշումներից:

Ղարաբաղյան շարժումը հայոց համազգային ոգու պոռթկումն էր, միասնական կամքի միաձուլման քուրան, ազգի ապահով ու բարգավաճ ապագան կերտելու հավաքական վճռականոյթունը:

Ղարաբաղյան շարժումը հունական առասպելաբանոյթունից մարդկոյթանը քաջ հայտնի Անթեյի՝ վերապրումի կոչող այն կենարար կրակն էր, որ դարեր ի վեր բորբոք մնաց հայ ժողովրդի բոլոր սերունդների հոգում ու սրտում՝ խորհրդանշելով կորուսյալ ազգային պետականոյթան վերականգնման, մեր նախնյաց ժառանգած բնօրրանում ազատ, անկախ ու միացյալ Հայաստանի վերակերտման մեր նվիրական իղձն ու երագանքը:

Ղարաբաղյան շարժումը Հայաստանի Առաջին Հանրապետոյթան արժանավոր ժառանգն էր, անցած դարակզբի ծայր աստիճան խառնակ ու ողբերգական, անբարեխույս ժամանակներում այն կերտած մեր հերոսական նախնյաց ի պարծանք՝ առավել առնական ու իմաստնալի, ազգովի առավել միական ու համախումբ:

Ղարաբաղյան շարժումը նույն դարակզբին Արցախ աշխարհում ծայր առած եւ հետագա տասնամյակներում երբեք չմարած ազատագրական պայքարի տրամաբանական շարունակոյթունն էր:

Ղարաբաղյան շարժումը քսաներորդ դարավերջի հայոց ազգային խիզախումի Սարգարապատն էր՝ լինել-չլինելու պատմական երկընտրանքում մեր վերջնական վճիռը, կենաց ու մահվան մեր հաղթական կռիվը, արդի փոթորկահոյգ աշխարհում մեր իններորդ ալիքը:

Անկախ նրանից, թե Ղարաբաղյան շարժման առաջին զանգվածային դրսեւորումները՝ հանրահավաքները, ցույցերն ու

երթերը հատկապես երբ եւ որտեղ կայացան, Ծարժման կիզակետը հանդիսացավ ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման մարզային խորհրդի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանը, որն ընդունեց պատմական որոշում՝ մարզն Ադրբեջանի կազմից Հայաստանի կազմ տեղափոխելու հարցում Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ եւ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդների առջեւ միջնորդոյթուն ներկայացնելու մասին: Այդ հիւրավի պատմական որոշումն ընդունվեց Մոսկվայի կենտրոնական եւ Բաքվի հանրապետական իշխանոյթունների ընդգծված կոչո ու կոպիտ արգելանքի պայմաններում, երբ ամենայն գնով, խտրոյթուն չընելով միջոցների միջեւ, փորձ էր արվում տապալել նստաշրջանը: Միասնամայն տրամաբանական է, որ հետագայում, հիմք ընդունելով հատկապես այդ պատմականորեն ելակետային իրադարձոյթունը, հենց փետրվարի 20-ն էլ օրենսդրոյթան ամրագրվեց որպես Արցախի վերածննդի օր, որն ահա տասնամյակներ ի վեր նշվում է որպես համապետա-



կան, նաեւ համազգային տոն:

Դարեր ի վեր Արցախը կարողացել է պահպանել իր ինքնուրույնոյթունը, եւ միայն 20-րդ դարակզբի աշխարհաքաղաքական վերադասավորումների պատճառով է, որ հայտնվել է օտարների հյուսած սարդոստայնում: Խոսքս վերաբերում է Ռուսաստանի բոլշեւիկյան կուսակցոյթան Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի տխրահռչակ, ընդ որում՝ որեւէ իրավական հիմք չունեցող, ուստի եւ ապօրինի որոշմանը, որի պարտադրանքով Լեռնային Ղարաբաղն ակամա հայտնվել է յոթ տասնամյակ շարունակ մնացել է ԱդրԽՍՀ կազմում: Այդ ժամանակահատվածում արցախահայոյթան հանդէպ խորհրդային Ադրբեջանի հետեւողականորեն ձեռնարկած բռնոյթունները միտված էին մեն մի նպատակի. քողարկված կամ բացահայտ ձեւերով հասնել երկրամասի հայաթափմանը: Ուստի, բնականաբար, Ղարաբաղյան շարժումն անխուսափելի էր: Արտաքին բարենպաստ պայմանների դէպքում այն, գուցեւ նույնպիսի հաջողոյթամբ, կարող էր պոռթկալ անցյալ դարի 30-40-ական թվականներին, 60-ական թվականների կեսերին, երբ հրապարակ եկավ մարզի մտավորականոյթան՝ հայտնի «13-ի նամակը»: Բայց այդ ժամանակներում անհնար էր անկախել կենտրոնական իշխանոյթունների հանդուրժողականոյթունը՝ համաժողովրդական կամքի նկատմամբ: Եվ միայն Գորբաչովի հռչակած «վերակառուցման» քաղաքականոյթան համատեքստում էր, որ ար-

ցախցիները 1988թ. կրկին բարձրացրին ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Ընդ որում, այն բարձրացվել էր գուտ ժողովրդավարական ճանապարհով՝ խաղաղ հանրահավաքների, երթերի, հանրագրերի, մամուլի հրապարակումների միջոցով: Իսկ Ադրբեջանի կազմից Լեռնային Ղարաբաղի դուրս գալու մասին բուն որոշումն ընդունվել էր բացարձակապես իրավական ճանապարհով, ԽՍՀՄ եւ միջազգային համընդհանուր նորմերի շրջանակներում:

Անշուշտ, հետագայում որոշակի սրբագրումներ կատարվեցին Հայաստանի հետ Արցախի վերամիավորման խնդրի իրացման ռազմավարոյթան մեջ, որդեգրվեց անկախ պետականոյթան ստեղծման ուղեգիծ, ինչը կատարվել է քաղաքական հանգամանքների պարտադրանքով: Բանն այն է, որ Մոսկվայում 1991թ. տեղի ունեցած օգոստոսյան խռովոյթունն արագացրել էր Խորհրդային Միութան՝ որպես միասնական միութեական պետոյթան փլուզումը: Արդեն օգոստոսի 28-ին Ադրբեջանն իրեն հռչա-

յորդիներով, հաջողոյթամբ կասեցրեց Ադրբեջանի զինված ագրեսիան եւ կարողացավ պաշտպանել հանրապետոյթան բնակչոյթան անվտանգոյթունը: Մայր Հայաստանի եւ սփյուռքահայոյթան նյութական եւ բարոյական աջակցոյթամբ հնարավորինս մեղմացվեց առաջացած մարդասիրական ճգնաժամը:

Ղարաբաղյան շարժման գլխավոր հատկանիշներից մեկը, անշուշտ, նրա համաժողովրդական բնոյթն էր: Զանգի ամբողջատիրական պետական համակարգում միայն այդ կերպ կարելի էր հասնել ազգային շահերի ու ձգտումների իրականացմանը:

Եվ ապա՝ Ղարաբաղյան շարժումը միանշանակ ինքնակազմակերպված էր ու համակարգված: Զուենալով ընթրինական նախադէպ՝ մեր ժողովրդին հաջողվեց բոլոր քայլերը կատարել օրինականոյթան ու ողջախոհոյթան շրջանակներում՝ այդ պահին գործող օրենսդրոյթան եւ միջազգային իրավունքի ու նորմերի պահպանմամբ:

Այնուհետեւ Ղարաբաղյան շարժումը, ճշգրիտ եւ ամուր հիմքեր է ստեղծել հետագա բոլոր ձեռքբերումների համար: Այն հատունացել էւ աստիճանաբար վերակազմավորվել է որպես ինքնիշխան պետականոյթուն, ինչը թույլ է տվել ամենադժվարին պայմաններում կառավարման արոյունավետ ու ճկուն համակարգի միջոցով ժողովրդի համար կենսական ու սկզբունքային հիմնախնդիրների լուծումներ գտնել: Այդ շնորհիվ հաջողվել է անհամեմատ կարճ ժամանակահատվածում եւ նվազագույն ցնցումներով, ընդ որում՝ հենվելով բացառապես ժողովրդի կամքի ազատ արտահայտման վրա, ձեւավորել իշխանոյթան լիարժեք ինստիտուտներ եւ մշտապես կատարելագործել դրանք: Արդեն 1991թ. դեկտեմբերին պետական իշխանոյթան բարձրագույն մարմնի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետոյթան առաջին գումարման Գերագույն խորհրդի եւ վերջինիս հաշվետու՝ կառավարոյթան, հետագայում, պատերազմական իրավիճակի հրամայականով թելադրված՝ Պաշտպանոյթան պետական կոմիտեի ձեւավորումն Արցախի անկախ պետականոյթան կայացման դրսեւորումներն էին: Հանրային եւ պետական կառավարման մարմինների գործունեոյթան բնականոն գարգացումները, իրավաքաղաքական հանգամանքների կայուն դիմադրական արդեն 1994թ. հանգեցրին իշխանոյթան թելերի տարանջատմանը, ինչը վերջնականորեն ամրագրվեց 2006թ. դեկտեմբերի 10-ին ընդունված առաջին Սահմանադրոյթամբ, ապա եւ նոր, բարեփոխված Սահմանադրոյթամբ, որ դարձյալ համաժողովրդական քվեարկոյթամբ հավանոյթան արժանացավ վերջերս՝ Արցախի վերածննդի 29-րդ տարեդարձի տոնական օրը՝ փետրվարի 20-ին:

Խոսքս ավարտեմ հարցով. այնուամենայնիվ, ո՞րն է, առհասարակ, Ղարաբաղյան շարժման եւ առանձնապես նրա կիզակետի՝ փետրվարի 20-ի խորհուրդը: Հնարավոր է՝ հռետորական հնչեց հարցս: Զանգի շրջափելիոյթան աստիճան առավել քան իրական եւ իրատեսական է յուրաքանչյուր արցախցու եւ, ընդհանուր առմամբ, ցանկացած գիտակից հայի աներկբա պատասխանը: Արցախի հայեցի գոյատեւման ու հարատեւման մեջ, Հայոց ազատ ու անկախ, միացյալ պետականոյթան վերականգնման, կայացման, հզորացման, մեր այդ համազգային գերինդրին ուղղված համայն հայ ժողովրդի միասնական ջանքերի ու համախումբ վճռականոյթան մեջ:

Սիդայել ՀԱԶՅՍՆ



### ՀՕՍ-ի Արցախի մասնաճյուղը շարունակում է «Այցելությունն դիրքապահ զինվորին» ծրագիրը



Հայ օգնության միության Արցախի մասնաճյուղը «Այցելությունն դիրքապահ զինվորին» ծրագրի շրջանակներում այցելել է առաջնագիծ: Հերթական այցելության համար ընտրվեց խորհրդանշական՝ Հայրենյաց պաշտպանի օրը:

Հայ Օգնության Միության Ստեփանակերտի, Կնճրիստանի, Շուշիի, Թաղլարի, Աշախի «Սոսե» մանկապարտեզների աշխատակիցներն առաջնագիծում կանգնած զինվորի համար մայրական ջերմությամբ ու հոգատարությամբ տոլմա, աղցան, կրթաբլիթ, գաթա են պատրաստել և անձամբ հասցրել զորամաս ու դիրքեր:

«Ծրագիրը մշտական է: Արդեն 5-րդ տարին է՝ Արցախի ՀՕՍ-ուհիներն այցելում են սահմանապահ զինվորին: Բոլոր ուտեստները պատրաստված են մեր մայրերի ձեռքերով, տևական են, մեր հոգին, սերը ներ ենք դրել, որպեսզի զինվորն այսօր իրեն զգա՝ ինչպես իր օջախում», - նշել է ՀՕՍ-ի Արցախի մասնաճյուղի ատենակառուցիչ Կարինե Դադայանը և ավելացրել, որ հայ կինը, հայ մայրը, ողջ ժողովուրդը սատար է կանգնած զինվորին, որը պատվով է կատարում իր վրա դրված պարտականությունը:

Արցախի N զորամասի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով հրամանատարի տեղակալ Արա Զամալյանը նման այցելությունների մեջ առանձնահատուկ ջերմություն է տես-

լում: «Նման դեպքերում եւ հուզմունք, եւ հպարտություն ենք ապրում, որովհետեւ զգում ենք, որ մեզ հետ են բոլորը», - հավելել է նա:

«Այսօր ամենակարեւորը մեզ համար դիրքապահ զինվորն է, եւ մեր այցելության նպատակը նաեւ այն է, որ դիրքապահ զինվորն իմանա իր առաքելության կարեւորությունը», - նշել է Ստեփանակերտի ՀՕՍ-ի «Սոսե» մանկապարտեզի տնօրեն Նելլի Դուլյանը:

Ծրագիրը շարունակական բնույթ է կրում, եւ ՀՕՍ-ուհիները պատրաստակամ են առաջիկայում եւս իրենց մայրական սերն ու օրհնանքը հասցնելու հայրենիքի պաշտպաններին:

**«ԱՄՍՈՒԺ»**

### Արցախի Հանրապետության ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության անդամ Արմեն Սարգսյանի այցը ԱՄՆ



րիկայի Կենտկոմի հետ: Հունվարի 15-ին՝ ՀՀԴ 126- ամյակին նվիրված տոնակատարությանը, որին մասնակցել է ավելի քան 2000 մարդ, հանդես են եկել որպես միակ բանախոս՝ «ՀՀԴ-ն եւ Արցախյան ազատագրական պայքարը» թեմայով, 2 ժամ տեւողությամբ զեկույցով: Արցախի Հանրապետության ներքին եւ արտաքին քաղաքականության մի շարք հարցերի շուրջ հարցազրույց են ունեցել «Հորիզոն» հեռուստաընկերության եթերում:

Էջմիածնի թեմի առաջնորդարանում հանդիպել են թեմի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոս Տերտերյանի հետ, ինչպես նաեւ Կիլիկիայի թեմի Արեւմտյան Ամերիկայի հոգեւոր առաջնորդ Մուշեղ Մարտիրոսյանի հետ:

Լուս Անջելես քաղաքի հյուպատոսարանում հանդիպել են ՀՀ հյուպատոս Վալերի Մկրտումյանի հետ:

- **Հանդիպումներ եք ունեցել նաեւ Լոս Անջելեսի քաղաքապետարանում:**

- Լոս Անջելեսում հանդիպել են հայկական 40 հայրենակցական միություններից կազմված խմբի մոտ 30 անդամների ներկայացուցիչների հետ: Զաղաքապետարանում ՀՀԴ Արեւմտյան Ամերիկայի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Տարոն Տեր-Խաչատրյանի ուղեկցությամբ հանդիպել են քաղաքապետարանի խորհրդի անդամ Փոլ Գրիգորյանի հետ: Հանդիպմանը

ընկարկել ենք Շուշի եւ Լուս Անջելես քաղաքների միջեւ հարաբերությունների խորացման հետ կապված հարցեր, քանի որ Շուշին եւ Լուս Անջելեսը հանդիսանում են քույր քաղաքներ: Փ. Գրիգորյանը, հաշվի առնելով Կալիֆոռնիա նահանգի կողմից Արցախի անկախության ճանաչման փաստը, առաջարկել է Շուշիին վերաբերող տնտեսական ծրագիր ներկայացնել Լոս Անջելեսի քաղաքապետարանի խորհրդին:

Հանդիպումներ են ունեցել Կալիֆոռնիա նահանգի խորհրդի անդամներ Յան Կալոստի եւ Զրիստինա Գարսիայի ու կոնգրեսական Չուրի Չուի հետ:

Հանդիպումներ են ունեցել նաեւ Մոնթեբելո քաղաքի ոստիկանապետի հետ, որի հետ ընկարկել ենք Արցախի Հանրապետության ներքին քաղաքականությանն առնչվող հարցեր, խոսել ենք ոստիկանական համակարգի առանձնահատկությունների մասին:

- **Ի՞նչ հարցեր են հետաքրքրում ԱՄՆում պարող մեր հայրենակիցներին:**

- Զարգացումները հիմնականում վերաբերում էին Արցախի Հանրապետության ներքին ու արտաքին քաղաքականությանը, մասնավորապես՝ Արցախի անկախության ճանաչմանը, ապրիլյան պատերազմին եւ դրանից հետո ստեղծված իրավիճակին:

- **Կա՞ն ուրիշ նահանգներ, որ պատ-**

րաստ են ճանաչել Արցախի անկախությունը:

- Կոլորադո նահանգում հանդիպել են նահանգի խորհրդարանի պատգամավոր Փոլ Ռոզենտալի հետ: Վերջինս եղել է Արցախում եւ դրական տպավորություններ ունի Արցախից: Հանդիպմանը ընկարկել է Կոլորադո նահանգի կողմից Արցախի անկախության ճանաչման հարցը, բայց, ըստ պատգամավորի, նահանգը դեռեւս պատրաստ չէ ճանաչել Արցախի անկախությունը: Հանգել ենք այն եզրակացության, որ այս փուլում անհրաժեշտ է մշակութային քաղաքականության ու համագործակցության խորացում, ինչը հիմքեր կստեղծի հետագայում ճանաչման գործընթացի համար:

Նյու Յորք եւ Նյու Ջերսի քաղաքներում հանդիպել են տեղի հայ համայնքների ներկայացուցիչների հետ, որտեղ հիմնականում մեր հայրենակիցների կողմից բարձրացվել են Արցախի քաղաքական ու տնտեսական իրավիճակին վերաբերող հարցեր:

ՀՀԴ օժանդակությամբ Արեւելյան Ամերիկայի քաղաքներից մեկում նախատեսվում է բացել Արցախին նվիրված պուրակ, որտեղ կտեղադրվի արցախցի որբեւ բանազակագործի ստեղծագործություն:

**Հարցազրույցը՝ Լիլիա ԲԱՂՅԱՆԻ**

### Համալսարանական կրթություն, կամ՝ ո՞վ է թերանում լրագրության մեջ

Արցախում լրագրության բաժինն ավարտած ուսանողները միշտ չէ, որ գտնում են մասնագիտական աշխատանք: Ծճարտության եւ միջերի կիզակետում լրագրությունը փոխակերպվում է վիրտուալ իրականության: «Ապառաժ»-ը փորձեց հարցման միջոցով պարզել՝ արդյո՞ք լրագրության բաժինն ավարտած ուսանողները աշխատում են համապատասխան մասնագիտությամբ: Հարցմանը մասնակից դարձրինք լրագրության ոլորտի ներկայացուցիչներին:

Ինչպես «Ապառաժ»-ի, այնպես էլ Արցախի այլ լրատվամիջոցներում միշտ չէ, որ աշխատում են լրագրողական կրթություն ունեցող անձինք: Արցախի պետական համալսարանի լրագրության բաժինն իր գործունեության տասնութ տարիների ընթացքում թողարկել է բակալավրիատի 250 եւ մագիստրատուրայի համակարգի 33 ուսանող: Միայն 2015-2016 թվականներին լրագրության բաժինն ավարտածների թիվը 17 էր: Ընդհանուր լրագրության բաժինն այս տարիների ընթացքում ավարտել է 283 ուսանող: Ընթացիկ տարում բաժնում սովորում է 48 ուսանող: Բանա-

սիրական գիտությունների թեկնածու, ավագ դասախոս, ԱրԴՀ լրագրության եւ գրականության ամբիոնի վարիչ Շուշան Ասկարյանի խոսքով՝ լրագրության բաժնի ուսանողը չորս տարիների ընթացքում ձեռք է բերում ամենատարբեր հմտություններ: ԱրԴՀ լրագրության բաժնում մասնագետների համալրման խնդիրը միշտ էլ արդիական է եղել: Հարցի շուրջ Շուշան Ասկարյանը նշեց, որ մասնագետների համալրման գործընթացը սկսված է, եւ այժմ էլ բաժինը կարիք ունի պրակտիկ դասախոսների:

Ուսանողների մեծ մասը շատ ակտիվ են սոցցանցերում իրենց իսկ կողմից տարածվող լրատվությամբ: Շուշան Ասկարյանի ու նույն բաժնի ուսանողների նախաձեռնությամբ վերջերս ստեղծվել է «Արցախլայֆ» բլոգային հարթակը, որը ցանկանում է ներկայանալ տրամադրությունների յուրահատուկ ներկայակալով: Այստեղ լրագրության բաժնի չորս սերունդներ փորձում են կիսվել իրենց գաղափարներով: Ապա ավելացրեց, որ լրագրության բաժնին ունի տեխնիկական հագեցվածության պակաս, որը շատ հաճախ լուրջ խն-

դիրների առաջ է կանգնեցնում:

Սիրա Ավանեսյանը լրագրության բաժնի բակալավրիատի համակարգն ավարտել է նախորդ տարի, այժմ ուսումը շարունակում է Նույն բաժնի մագիստրատուրա համակարգում: Խոսելով այն մասին, թե ինչն է խնդիրը, որ լրագրության բաժնին ավարտած ուսանողները չեն աշխատում իրենց իսկ մասնագիտությամբ, նա նշեց, որ լրագրության խնդիրների կծիկը լաբիրինթոսի բավիղ է, եւ այստեղ միայն մեկ խնդիր չէ, որ առկա է. «Անհասարակ լրագրողի «արտադրությունն» ու պահանջարկը չեն համապատասխանում: Ժամանակի զարգացման շրջանում հետ մասնագիտությունը դարձել է հոբբի, նյութ գրելը՝ «պարզապ վախտի խաղալիք»: Նա նաեւ նշեց, որ բացի համալսարանական կրթությունից՝ լրագրողին անհրաժեշտ է նաեւ ինքնակրթություն, քանի որ համալսարանը ժամանակագրական առումով չի հասցնում եւ չի կարողանում բավարարել ուսանողի պահանջները: Սիրա Ավանեսյանը հավելեց, որ լրագրության բաժնին ունի մասնագետների պակաս. «Մեզ դասավանդում են դասախոսներ, ովքեր լրագ-

րության մասնագետներ չեն, բայց դասախոսում են լրագրության վերաբերող առարկան: Այստեղ մենք բախվում ենք խնդրի: Ուսանողը իրեն հուզող հարցն է տալիս առարկայի վերաբերյալ, իսկ «ոչ մասնագետը» չի կարողանում նրան հստակ պատասխան տալ: Միաժամանակ ուսանողները ստանում են միայն դասախոսություններ, քանի որ նույն «ոչ մասնագետը» չի կարող սովորեցնել ինչպես նյութ գրել, կամ էլ՝ ինչպես պատրաստվել հարցազրույցի»: Սիրա Ավանեսյանը հավելեց, որ այժմ աշխատում է ոչ մասնագիտական ուղղվածությամբ, բայց շատ կցանկանար աշխատել ըստ մասնագիտության եւ կոտրել այն ճշմարիտ կարծրատիպը, որ լրագրության բաժինն ավարտում, բայց չեն աշխատում:

Ըստ զրուցակցիս՝ արդյունքում ստացվում է այնպես, որ լրագրության բաժնին ավարտած ուսանողները չեն աշխատում համապատասխան մասնագիտությամբ, քանի որ ուսումնառության ընթացքում չեն ստանում բավարար գիտելիքներ պրակտիկ դաշտում աշխատելու համար:

**ՍԻԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ**





